01/10.5/7814-11
2011-05-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Անահիտ Բախշյանի, Զարուհի Փոստանջյանի, Ստյոպա Սաֆարյանի և Արմեն Մարտիրոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

Ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը չի համապատասխանում կից ներկայացված հիմնավորմանը: Համաձայն հիմնավորման՝ ներկայացվող նախագծերի

նպատակը կենսաթոշակառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստը կենսաթոշակի տասնհինգապատիկի չափով սահմանելն է:

Համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի, զինծառայության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Համադրելով այս, և «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվող 40^1 հոդվածը, ստացվում է, որ զինծառայության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների հուղարկավորության կրկնակի նպաստ է նախատեսվում:

Հարկ է նշել, որ կենսաթոշակառուների մահվան դեպքում տրվող թաղման նպաստը վճարվում է կենսաթոշակառուի թաղումը կազմակերպող (մահվան վկայականի բնօրինակը ներկայացնող) անձին՝ որպես մահացած կենսաթոշակառուի թաղման ծախսերի մասնակի փոխհատուցում: Կենսաթոշակառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստի չափի տարբերակումը՝ կախված կենսաթոշակի տեսակից և կենսաթոշակի չափից, արդար չէ և չի բխում թաղման նպաստի տրամաբանությունից:

Միաժամանակ, զինվորական կենսաթոշակ ստացող անձի մահվան դեպքում տրվող թաղման նպաստը կենսաթոշակի տասնհինգապատիկի չափով սահմանելը և զինծառայողի մահվան դեպքում, ի լրումն զոհված (մահացած) զինծառայողների հուղար-

կավորության ծախսերի, թաղման կրկնակի նպաստ վճարելը կառաջացնի լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն, որը նախատեսված չէ միջնաժամկետ ծախսերի ծրագրով:

Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների նկատմամբ պետության առանձնահատուկ վերաբերմունքը դրսևորվում է այդ կատեգորիայի անձանց կենդանության օրոք տրվող սոցիալական երաշխիքների լրացուցիչ փաթեթով (բնակարանային ապահովություն, առողջապահություն, հանգստի կազմակերպում, դրամական օգնություններ և այլն), ինչպես նաև կենսաթոշակային ապահովության առանձնահատուկ սխեմայի կիրառմամբ:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված նախագծերի փաթեթի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Գրիգորյանը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՉԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Չինծառայողների եվ նրանց ընտանիքների անդամների սսոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է՝

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա զգալի ազդեցություն չհայտնաբերվելու եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է մահացած զինծառայողի հուղարկավորությունն իրականացրած անձին թաղման նպաստի վճարմանը,* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա զգալի ազդեցություն չի նախատեսվում՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

1. Կարգավորման ենթակա հարաբերությունները հետևանքներ չեն առաջացնում տնտեսական աճի և ներդրումների ներգրավման վրա:

2. Կարգավորման ենթակա հարաբերությունները չեն ազդում «Գործարարությամբ զբաղվելը» համաթվի բաղադրիչների վրա:
3. ՓՄՁ զարգացման ինդեքսի հաշվարկման հիմքում ընկած ցուցանիշների ցանկը չի ներառում խնդրո առարկա փաստաթղթերի հետ կապված ցուցանիշները:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով զգալի ազդեցություն չհայտնաբերելու եզրակացություն:

Եզրակացություն

«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր)՝ կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունը կազմվել է՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1 և 28-րդ հոդվածների պահանջները: Նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» N 18-Ն որոշման համաձայն:

Օրենքի նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում.

ա) ռազմավարական ազդեցությունը չեզոք է, քանի որ ռազմավարական ազդեցության բնութագրիչներին չի առնչվում,

բ) շահառուների վրա ազդեցությունը չեզոք է, քանի որ առնչվում է սոցիալական պաշտպանության ոլորտի շահառուների փոքր խմբի (որոշակի դրական ազդեցություն ունի քիչ թվով ընտանիքների վրա):

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման դեպքում

«Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին> ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին> և <Պետական կենսաթոշակների մասին> ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին> ՀՀօրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին> ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին> և <Պետական կենսաթոշակների մասին> ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին> ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ նախագծեր) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Նախագծերի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Նախագիծ
Պ-1120-12.04.2011-ՍՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» 1998 թվականի հոկտեմբերի 27-ի Հայաստանի Հանրապետության օրենքում (ՀՕ-258) ավելացնել 40[1] -րդ հոդված՝ հետեւյալ բովանդակությամբ.

ՀՈԴՎԱԾ 40[1] . ԹԱՂՄԱՆ ՆՊԱՍՏԻ ՎՃԱՐՈՒՄԸ ՄԱՀԱՑԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՈՒՆԸ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԻՆ

Զինծառայողի մահվան դեպքում նրա հուղարկավորությունը կատարած անձին վճարվում է թաղման նպաստ՝ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հիմքերով եւ կարգով:

Զինծառայողի մահվան դեպքում նրա հուղարկավորությունը կատարած անձին վճարվում է թաղման նպաստ՝ կենսաթոշակի տասնհինգապատիկի չափով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2012 հունվարի 1-ից:

Նախագիծ
Պ-1120[1]-12.04.2011-ՍՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ 243-Ն) 44-րդ հոդվածի 6-րդ մասում «Հայաստանի Հանրապետության կառավարությունը’ արտահայտությունից հետո ավելացնել «, բացառությամբ զինվորական կենսաթոշակ ստացած կենսաթոշակառուի, ում թաղման նպաստը վճարվում է «Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին’ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափով’ բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2012 հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի

«Զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում մինչ 2010 թվականի հոկտեմբերի 5-ին կատարված փոփոխությունը կենսաթոշակառուի մահվան դեպքում նրա ընտանիքին վճարվում էր թաղման նպաստ՝ կենսաթոշակի տասնհինգապատիկի չափով: Վերոնշյալ օրենքի փոփոխության համաձայն՝ Կառավարությունն է սահմանում կենսաթոշակառուի մահվան դեպքում վճարվող նպաստի չափը, որը 21.10.2010 թվականի Կառավարության թիվ 1392-Ն որոշմամբ սահմանվել է 200 000 դրամ:

2010 թվականի դեկտեմբերի 22-ին նշված օրենքում կատարված փոփոխություններով (ՀՕ 248-Ն) ուժը կորցրած ճանաչվեցին զինծառայողների թաղման նպաստների վերաբերյալ հատուկ նորմերը եւ ամրագրվեցին նույն օրն ընդունված «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ 243-Ն) 44-րդ հոդվածում: Վկայակոչված նորմերից բացի՝ նշված հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Թաղման նպաստի սահմանվող չափը չի կարող պակաս լինել նախկին չափից»: Օրենքը հստակորեն ամրագրում է թաղման նպաստի չափի նվազեցման արգելքի սկզբունքը, որը գուցե նախկին օրենքում ամրագրված չէր, սակայն ակնհայտ եւ ենթադրելի էր: Հակառակ օրենքի պահանջի՝ Կառավարության 21.10.2010թ. թիվ 1392-Ն որոշմամբ մի քանի անգամ նվազեցվել է նախկին օրենքով սահմանված գումարը:

Արդյունքում ստացվում է, որ մեր պետականության կայացման հարցում մեծ ավանդ ունեցող զինծառայողների համար Կառավարությունը ոչ միայն արժանավայել կյանք, այլեւ արժանապատիվ թաղում չի կարողանում ապահովել:

Սույն նախագծերի փաթեթի նպատակն է օրենքով սահմանել

կենսաթոշակառուի մահվան դեպքում նրա հուղարկավորությունը կատարած անձին վճարվող թաղման նպաստը՝ կենսաթոշակի տասնհինգապատիկի չափով: